

Միջազգային իր զանգով Ռուսայի հանդեպ բնակիչք նոյն խաղաղութեան պայմանները կապեցին նոր հետ, որ եւ խառանցիքը իյազ ուղարկեց Արուստային Մծրին, որ Տպաստեկեցաւ, իսկ ինքն արշաւեց Գարայ եւ առաւ քաղաքը: Ապա նա ուղարկեց Օսման ի. Արուստային Չորրորդ Հայք, որի ժողովուրդը պատերազմեցաւ նորա հետ (Ասֆ-Քալէ ի Մուսթօթալ նահատակեցաւ կուռի մէջ), բայց յետոյ խաղաղութիւն հաստատեց նորա հետ՝ հարկ տալու պայմանով:

Իյազ նուաճեց Սամուսա եւ արշաւեց Արուս, Ռասիֆայ եւ Ալիտակ երկիրը, որոնց բնակիչք խառանին շնորհած պայմաններով խաղաղութիւն հաստատեցին, բայց երբ Սամուսա ժողովուրդը դաւաճանեց, նա դնաց պաշարեց եւ առաւ քաղաքը: Ապա դիմեց Եփրատի վերայ դաւանուած Մանրեղ կամուզը եւ նուաճեց այս քաղաքը նորա շընկալքով հանգերն: Գալով Ռասիֆ Այն՝ որ է Այն Վարդայ՝ եւ գանելով այստեղ դիմադրութիւն, նա թողեց քաղաքը, գնաց թիւ Մազկին եւ նուաճեց քաղաքը Ռուսայի պայմաններ ճիման վերայ 19 թ.: Այնտեղեց նա եկաւ պաշարեց Ամիդ, որի ժողովուրդը պատերազմեցաւ նորա հետ, բայց ապա Ռուսայի խաղաղութեան պայմանները ընդունեց: Իյազ նոյնկերպ նուաճեց Մարտրոսաց քաղաքը եւ կափարտութիւն, գնաց Մծրին, որի բնակիչք դիմադրելուց յետոյ Ռուսայի խաղաղութեան պայմանները ընդունեցին: Ապա նա առաւ Թուր Աբդին, Մարդին տմրոջը, յարձակեցաւ Մոսուլի վերայ եւ գրաւեց նորա ամրոցները: Մակայն (այլք) պատմում են, որ նա այնտեղ չէ հասած նորա մտ եկաւ Ջալգանի իշխանը եւ խաղաղութիւն հաստատեց նորա հետ: Իյազ այստեղեց անցաւ Արզն եւ նուաճեց քաղաքը, մտաւ ապա կիրճը, դուրս ելաւ այնտեղեց (դիմելով) դէպի Բիթլիս, եկաւ Խլաթ, որի իշխանը խաղաղութիւն կապեց նորա հետ, եւ հասաւ մինչեւ Հայաստանի Ազն Զբերը: Աերա դաւանելով Ռաքքայ նա գնաց Հիւն եւ այնտեղ մեռաւ 20 թ.:

25 թ. Օսման գրեց Վալիդ (ի Օքքային) կուֆայի վերայ կառավարչէ իսկ Օտայի ի. Յարքադին յետ կոչեց Արաբաստականց: Որովհետեւ այս երկրի բնակիչք խզեցին խաղաղութեան պայմանները, Վալիդ յարձակեցաւ նոցա վերայ 25 թ., առաջապահ զօրքի հրամանատար նշանակելով Աբգուլաս ի. Հուրայլ Ահմատին, նա ուղարկեց նորան ապաստանելու Մուզան, Բարաթի եւ Թայլաասան՝ Աբգուլաս յաղթեց, աւարի առաւ եւ գերեց, այն ժամանակ Արաբաստականի ժողովուրդը խնդրեց խաղաղութիւն, եւ Վալիդ ստացաւ՝ Հուրայլայի շնորհած խաղաղութեան պայմաններին համաձայն՝ 800,000 դրամ:

Գորանից յետոյ Վալիդ ուղարկեց Սալման ի. Ռարիայ Բահլին Հայաստանի բնակիչներին դէմ 12,000 զօրքով, որ ապաստանեց, սպանեց, գերեց եւ վերադարձաւ Վալիդի մտ՝ Հարուստ աւարով: Աերջինն՝ նոյնպէս յաղթուածեամբ եւ աւարառութեամբ վերադարձած լինելով՝ դիմեց դէպի Մոսուլ եւ բանակեցաւ Հադիզայում: Այստեղ նորան հասաւ Օսմանի թուղթը, թէ՛ «Մուսվիայ ի. Արուս Սուֆիան ինձ կը գրէ՝ Ես լուր ստացայ, որ յոյնք մեծ բազմութեամբ կ'արշաւեն մուզլինների դէմ. ես կարծում եմ, որ նա նոցա օգնութեան կուղարկէ կուֆացիներից, իսկ դու ուղարկի թշնամու դէմ մի քանչ եւ արտու մարդ 8 կամ 9,000 զօրքով այնտեղեց, ուր քեզ կը հասնի իմ թուղթը: Ողջն, յ Վալիդ դարձաւ դէպի զօրքը, սեղեկացրեց նորան (այս) բանի մասին եւ ուղարկեց Սալման ի. Ռարիայ Բահլին 8,000 զօրքով հանդերձ: Սալման արշաւեց եւ մտաւ Ասորիքի ժողովրդի հետ յոյնաց երկիրը, որ նա՛ իւր զօրքը բաժանելով մի քանի գնդերի՝ ապաստակ սփռեց, աւերեց ինչ որ կամեցաւ եւ առաւ բազմութիւ ամրոցներ:

Այլք կը պատմեն, որ Մուլիդ ի. Աս ուղարկեց Հաբիբ ի. Մասլամային Սալման ի. Ռարիայի հետ հանդերձ մուզլիններին օգնութեան. պատճառն այն էր, որ Օսման գրեց Մուսվիային ուղարկել Հաբիբ ի. Մասլամային ասորիքի ժողովրդի հետ Հայաստան. Մուսվիայ ուղարկեց, եւ Հաբիբ գնաց պաշարեց կարին եւ այնպէս նեղեց քաղաքի բնակիչներին, որ նոցա խնդրեցին իրենց ողորմել՝ գաղթելու կամ հարկ տալու պայմանով՝ նոցանից շատերը գաղթեցին եւ բնակեցան յունաց երկրում: . . .

(Հարանուիտի) A. ՌԱՍԻԹՅԱՅ

**Մ Ա Յ Ե Ն Ա Գ Բ Ա Կ Ա Ն**

ՄԻԻԹԸՐ ԳՕԻԹ ԳՆՑՈՍՑՆՆԵԳԻՐԸ ԵՒ ՀՈՅՈՑ ՀԻՆ ՔԱՂՎՔՈՒՅԻՆԿԱՆ ԻՐԻՒՌՆԵՐԸ  
(Ուսումնասիրութեան փորձ):

**Հ Ա Տ Ո Ւ Մ Ծ Ա Ռ Ա Ջ Ի Ն**  
**Գ Լ Ո Ւ Խ Գ.**

Հայոց Դատարանների ուղի-դնիքը

**IV.**

(Հարանուի-թի-նի)

2. Կոնստանտնուպոլիսի Համեմատաբար սովորութեան կրաւուքի հետ, Միտիմար Գօշը

1 Jaksuf անի Մուսուկի Յարիչ յ. արձի եւ Թայլասանի  
2 Jaksuf Գամուան յաղաթայ երկրի մտա  
3 Ըստ Յարիթի այս պայմանագրութիւնը տեղի ունեցաւ 22 թ.:

1 Jaksuf Գամուանի փորք քաղաք Յերիսի վերայ Ջար գետին մտա  
2 Հարանուիտի-նը բառացի քաղաքն է Բեյազլիքի:

շատ մեծ անեղ է ընծայում կանոնական իրաւունքին, որը մի անսպառ աղբիւր է եղել Տայոց Գառաստանագրքի բովանդակութեան համար: Եկեղեցական ժողովների որոշումները ու առանձին հոգեւոր հայրերի յօրինած կանոններն ու կարգադրութիւնները կազմել են ոչ միայն Տայոց Գառաստանագրքի հիմնական նիւթը, այլ և գարձել են ղեկավարող առաջնորդ Մխ. Գօշի իրաւարանական տշխարհայեացքի մշակելուն և Գառաստանագրքի յօդուների ընտրութեան ու խմբագրութեան մէջ: Այս աղբիւրները վերլուծելով նկատում ենք, որ մի կողմից՝ այստեղ գեր են խաղացել զուտ ազգային բնոյթ կրող հիմնարկութիւններն ու որոշումները, իսկ միւս կողմից՝ օտարագրի, գլխաւորապէս բիւզանդական, այն է յունացական եկեղեցու որոշումները: Արդէս նախ քան Քաղկեդոնի ժողովը (451 թ.) Տայերը ջերմ մասնակցութիւն ունեին տեղեկական ժողովներին, նմանապէս և այդ ժողովից յետոյ, երբ Տայերը իսպառ անջատուցեցին յունական եկեղեցուց, Հայաստանում արդէն ինքնուրոյն և ինքնաբերաբար կայանում էին եկեղեցական ժողովներ, որոնք մշակում էին տեղական եկեղեցական կանոնագրութիւններ ու աշխարհիկ գոյն կրող որոշումներ յատկապէս եկեղեցական եխերի՝ այն է ժողովուրդների ներքին կեանքի կարգաւորման ու իրական յարաբերութիւնների բարելւման համար: Գոյնի այդ՝ առաջին երեք տեղեկական ժողովների որոշումները Հայաստանում վերաբրձնում են ընդունում էին իր ժամանակին համարւած յատուկ տեղական եկեղեցական ժողովներում: Այսպիսով մի քանի դարեր շարունակ, երկար մի պատմական ժամանակամիջոցում, սկսած Չալարչապատի Հայոց առաջին եկեղեցական ժողովից (325 թ.) մշակուել ու հրատարակուել են բազմաթիւ որոշումներ թէ կրօնական և թէ աշխարհիկ ընտարութեամբ, որոնք միանգամայն օրինական ոյժ ունեին հայ վարչական ու գառաստանական մարմինների համար, վրան դի վերոյիշեալ որոշումները բոլրում էին այնպիսի հիմնարկութիւններից, որոնք միւսնայն ժամանակ տեղական կեանքում բարձրագոյն օրէնսգրական էին համարւում: Բացի այս ստեակ որոշումներից, որոնք մշակւում են յօրինւում էին Հայոց եկեղեցական ժողովներում, վերջինները նաև հաստատւում և ի կիրառութիւն ընդունւում էին առանձին հոգեւոր անհատների կողման կանոններն ու կարգադրութիւնները,

որոնք նմանապէս օրինական նշանակութիւն էին ստանում, զոր օրինակ Թաղէտ առաքեալի կանոնները, Գրիգոր Լուսաորդին վերագրած օրէնները եւ վերջապէս Ս. Սահակի որոշումներն ևս այլն: Աւերորդ ենք համարում այստեղ խօսել այդ օրէնների ու որոշումների աղբիւրների ընդհանուր բովանդակութեան մասին, քանի որ այդ հարցը աւելի պատկանում է Հայոց կանոնական իրաւունքի պատմութեանը: Յիշատակենք միայն, որ շնայած Տայոց եկեղեցու յունականից անջատուցում, վերջինս այնուամենայնիւ կողմնակի կերպով, միանգամայն աննկատելի հայ ժողովուրդի հայեացքներից, խորապէս ազգում էր Տայոց տեղական ժողովների որոշումների բովանդակ բնոյթի վրայ: Իլ շնք ստւում զանազան առաքելական կանոնների (Κανόνες κληρικών των Ἀποστόλων) և առաջին երեք տեղեկական եկեղեցական ժողովների որոշումների մասին, որոնք ընդունւած էին Հայոց մէջ, այլ ևս տեսնում ենք, որ օտար եկեղեցիների տեղական ժողովների (συνοδοι τῆς τοῦ) որոշումներն ու կարգադրութիւնները մուտք էին գործում հայ հոգեւորականութեան մէջ, որը անշուշտ օգուում էր այդ օտարազաւան կանոններից հայ եկեղեցական այն կանոնների յօրինման ու խմբագրման համար, որոնք յետագայում հաստատուելու և ընդունուելու էին Հայոց ազգային ժողովներում:

Յիշումի Հայաստանում գոյութիւն ունեին յունական եկեղեցու այդ տեսակ տեղական ժողովների որոշումները թարգմանական օրինակներով, ինչպիսիք են՝ Անիւրիայի, Դեոկեսարիայի, Գանդարի, Անտիոքի, Լուսոբիկայի, Սարգիսի, Նմանապէս և օտար օտար հայրերի կանոնները, որպիսի են Ս. Բարսեղ Մեծի (+ 379 թ.), Ս. Աթանասի ևս այլն: Այս այս վերոյիշեալ աղբիւրները ահարկեալ մասայութիւն են մասնացել Ս. Գօշին Հայոց Գառաստանագրքի յօրինման գործում: Հայոց Գառաստանագրքը մասնաւորաբար կը նկատենք, որ շատ անգամ ամբողջ յօդուներ անփոփոխ կամ շնչին փոփոխութեամբ վերցւած ու փոխաւած են յիշեալ յունական աղբիւրներից, որոնք երբեմն Մխ. Գօշը կոչելու է իր անձնական կամ հայ եկեղեցական կանոնների սկզբունքների վրայ հիման կարծիքներ և որոշումներ: Անկասկած, այդ կանոնական գրականութիւնը, թէ օտարը, թէ ազգայինը, իր շնչառի ազդեցութիւնը թողել է Հայոց Գառաստանագրքի գլխաւորապէս առաջին մասի, այն է Անիւրիայի

կանոնի վրայ, նմանապէս եւ երկրորդ մասի զուտ եկեղեցական իրաւունքին վերաբերեալ յօրուածների վրայ: Միակէս նաեւ քաղաքացիական իրաւունքի որոշ կողմերը զերծ շնն մտացել այդ կանոնական իրաւունքի ազդեցութիւնից: մանաւանդ աչքի է զարնում այդ ազդեցութիւնը Հայոց Գաղտաստանագրքի ամուսնական ու ժառանգական իրաւունքների, մասամբ եւ քրէական իրաւունքի մի քանի երեւոյթները վրայ:

3. Մովսէսյան իրաւունք: Կանոնական իրաւունքից յետոյ Հայոց Գաղտաստանագրքի շատ բաժինների համար իրրեւ նշանակող աղբիւր ծառայել է Մովսիսական իրաւունքը, զուտ հրէական իրաւունքը, որ զերծ էր յետագայի ըստբունական տայմուդական խորիմաստութիւններից: Թէ ի՞նչ լայնածաւալ տեղ է բռնում մովսիսական իրաւունքի ազդեցութիւնը Մխ. Գօշի Գաղտաստանագրքի մէջ, անյայտնի է դառնում նրանից, որ Հայոց Գաղտաստանագրքի քիչ թէ շատ քաղաքացիական բնոյթ կրող իրաւական նորմերը, մանաւանդ որոնք վերաբերում են դաշանց ու ընչական իրաւունքներին իւրացուած են իսրայէլական օրէնքներից: Իսկ քրէական իրաւունքը իր բովանդակ ոգով ու էական գաղափարով կարելի է ստել ամբողջովին իւրացուած է մովսիսական իրաւունքից, բացի այն շնչին տարբերութիւնից ու փոփոխութիւններից, որոնք անհրաժեշտ էին երեւում Մխ. Գօշին իր խմբագրած յօււածները յարմարացնելու քրիստոնէական օգուտ, մանաւանդ ապաշխարանքի հարցի վերաբերմամբ: սակայն հրէական պատժական իրաւունքի հիմնական սկզբունքը, այն է՝ վրէժի ու փրկանքի գաղափարը, նաեւ պատժական պատասխանատուութեան տարածումը անբան կենդանիների վրայ, անփոփոխ անցել են Հայոց Գաղտաստանագրքի մէջ եւ պահպանել են իրենց ուրոյն բնակարանութիւնը: Հարց է ծագում, թէ ինչպէս մովսիսական իրաւունքը կարող էր գոյութիւն ունենալ Հայաստանում:

Քրիստոնէութիւնը, իբր հրէութեան յաւրորդ կրօն տարածուելով համայն աիեղելքում ընդունեց Աստուածաշունչի սրբազան գրքի նշանակութիւնը: Հասարակական յարաբերութիւնները կարգաւորող նորմերը, դարձան նախնական քրիստոնէայ համայնքների սկզբնական օրէնքները: համայնքների որոնց հնազոյնների շարքերին էր պատկանում նաեւ հայկական եկեղեցին: Ահա այդ մովսիսա-

կան օրէնքներն էլ դարձան հին կանոնական իրաւունքի առաջին աղբիւրները, հիմնաքարերը, ոչ միայն լայնածաւալ Արեւելքում, այլ եւ Արեւմուտքում: Ցաւաւոր միջին դարերի սկզբներում այդ մովսիսական իրաւունքը իր մաքուր գոտութեամբ իւրացրել էին Անգլոսաքսերը եւ ընդունել էին այդ իբրեւ իրենց տեղական քաղաքացիական միակ իրաւունքը: Առաւել նշանակող գեր է խաղաղել Մովսիսական իրաւունքը Արեւելքում, ուր նա լրացնում ու ծածկում էր այն պակասը, որ արտայայտուած էր արեւելեան ժողովրդների իրաւական զարգացման թերութիւններից, որոշակի սահմանած իրաւական հայեացքների բացակայութիւնից:

Երբայի հրէական իրաւունքը այնքան խորն էր արմատացած արեւելեան ժողովրդների քաղաքացիական պատմութեան մէջ, որ նոյն իսկ հռոմէական իրաւունքն անդր էր եղել դուրս վանելու տեղական դատարանների գործունէութիւնից այդ իրաւունքը եւ ստիպած էր յետ նահանջելու նրա առաջելու: Բացի այն, որ հրէական իրաւունքը իր պարզ բովանդակութեամբ ու անբարդ նիւթով աւելի գիրքին էր յարմարուած արեւելեան ժողովրդների կուլտուր սոցիալական գրութեանը, նա ունէր եւս մի առաւելութիւն իւր յաջող գերելիութիւնն աւելի եւս ազդեցիկ տարածելու: Մովսիսական իրաւունքը քրիստոնէական հոգեւորականութեան ձեռքում դարձաւ մի ուժեղ զէնք եւ յարմարագոյն միջոց իր դասային դիրքը ամրացնելու Մովսիսական օրէնքներով իրաւունքի կատարողներն ու կարգաւորողները, նմանապէս սոցիալական դրութեամբ բարձր կանգնած, համարուում էին հոգեւորականները: Բաւական է աչքածելու հրէայ ժողովրդի քաղաքացիական ու կրօնական ամբողջ պատմութեան վրայ, որպէս զի համոզուեց մովսիսական օրէնքների այդ տեսակների նշանակութեան վերաբերմամբ: Զարմանալի չէ ուրեմն, որ նորախն քրիստոնէական համայնքներում, որտեղ քարոզչներն ու առաքեալները՝ յետագայ հոգեւոր դասի այդ առաջին ներկայացուցիչներն ու կարապետները, որոնք մեծ դեր էին խաղում իրենց համայնքի բաղկացուցիչ անդամների փոխադարձ յարաբերութիւններին ու ներքին կեանքի կարգաւորում մէջ, մովսիսական իրաւունքի մէջ գտան իրենց ժամանակի ոգուն միանգամայն յարմար պայմաններ այդ իւրացնելու եւ ընդունելու նորածիլ քրիստոնէական իրաւունքի մէջ, մի իրաւունքի, որ կարգաւորում էր ժողովրդի մէջ միայն եկե-

ղեցական՝ զուս կրօնական՝ այլ եւ աշխարհիկ, քաղաքացիական յարաբերութիւնները:

Հին Հայաստանն, ուր հոգեւորականութիւնը քրիստոնէութեան մուտքի առաջին օրից սկսած այնքան ազդեցիկ դեր էր ձեռք բերել երկրի սոցիալ-կոլտուրական զարգացման պատմութեան մէջ, չէր կարող յապաղել հայ դատաստանական ու իրաւական հիմնարկութիւններին մէջ ներմուծելու մոսխրական օրէնքները:

4. Հռովմէական-Բիզանդական Իրաւունքները  
Քննելով Հայոց Դատաստանագիրքը, կը նկատենք, որ բացի Բիզանդիայի կանոնական իրաւունքի, ունեցած խոշոր ազդեցութիւնից, Բիզանդական իրաւունքը, այն է նրա քաղաքացիական մասը, նմանապէս որոշ ազդեցութիւն է թողել, ծառայելով իրեն ազդէր մեր Դատաստանագրքի քաղաքացիական որոշ օրէնքներին խմբագրութեան մէջ: Այստեղ հարկ է տարբերել Բիզանդական իրաւունքի երկու տեսակ ներգործութիւնը: Նախ՝ երեւում է, որ Արիւնելքում գործող Հռովմէական-Բիզանդական իրաւունքը, որ ոչինչ ընդհանուր բան չունէր յետ-յուստինիանական Բիզանդական օրէնագրութեան հետ եւ պարունակում էր իր մէջ զուտ հռովմէական իրաւունքի էական սկզբունքները, վաղուց կիրառւում էր նաեւ Հայաստանում, ուր նա մուծուել էր հարեւան երկրներից: Այդ Հռովմէական-Բիզանդական իրաւունքը դործել է մեր երկրում՝ այսպէս անւանած Ասորւ-Հռովմէական օրէնգրքով, որը տակաւին նախ քան Մի. Գօշի Դատաստանագրքի երեւան գալը ըստ վաղուց կիրառւում էր ի միջն այլ Դատաստանագրքերի ու Օրէնագրքերի հայ իրաւական ու դատաստանական հիմնարկութիւններում: Այդ Ասորւ-Հռովմէական օրէնագրքի հայ թարգմանութեան հեղինակի ու ժամանակի մասին առ այժմ պակասում են որեւէ տեղեւորութիւններ, սակայն ամենահնագոյն օրինակներից մէկը ասորական բարբառով Ձ գարու սկիզբներին գրած, գտնուում է այժմ Լոնդոնի ազգային գրադարանում: Յամենայն դէպս այդ հին ձեռագիրը ցոյց է տալիս, որ յիշեալ օրէնագիրքը սկսած Ձ գարուց գործում էր Բիզանդական կայսրութեան արեւելեան երկրներում բնակող քրիստոնեայ հայասակ ազգերի մէջ: Առաջի այդ Օրէնագրքի բազմաթիւ ձեռագիր օրինակները գտնուում են հայ, արաբական, ասորական, արաբական լեզուներով: Վերջինն այլ Օրէնագիրքը ազատ փոխադրութիւն է մեզ անյայտ աղբիւրից վեր-

ցրած օրէնքներից, որոնք յարմարեցրած են տեղական ուրոյն ժողովրդական պէտքերին ու կենսական պայմաններին: Ահա այս Ասորւ-Հռովմէական Օրէնագիրքը, մեծ չափով տարածուելով հայկական գաւառներում, որոշ մասով ազդել է Մի. Գօշի Դատաստանագրքի յարուածների իրաւաբանական բովանդակութեան վրայ: Հայոց Դատաստանագրքի յարուածները ու Ասորւ-Հռովմէական օրէնքների բաղադատութիւնը երեւան է գալիս, որ սրանց մէջ որոշ թէեւ հազիւ նկատելի առնչութիւն կայ, մանաւանդ ամուսնական իրաւունքի ընչական յարաբերութիւնների եւ ժառանգական իրաւունքի վերաբերմամբ:

Ազգ. գոյութիւն ունենն հին Հայաստանում, որպէս էլ ամբողջ առաջաւոր Արիւնելմ, Բիզանդիայից տարածուած օրէնագրքեր, դատաստանագրքեր, իրաւական ու օրինական ժողովածուներ, որոնք կազմւած էին յետագայ կայսրների ձեռքով: Ինչպէս յայտն է, Յուստինիանական օրէնագրութիւնը, որ զուտ քաղաքացիական, աշխարհիկ ոգի էր կրում, չունեցաւ Հայաստանում ոչ մի շտափելի ներգործութիւն: Հայկական գաւառները, ուր պաշտօնապէս հրատարակւած էր Յուստինիանի օրով այդ հռովմէական իրաւունքի կիրառումը, ընդունակ չեղան իւրացնելու. այդ իրաւունքի գաղափարները ու ոգին: Սակայն այն շրջանում, երբ արդէն սկսուել էր Բիզանդական քաղաքակրթութեան այլատարումը, երբ Corpus iuris civilis-ի գտնուած հռովմէական իրաւունքը խեղաթիւրուել էր յետագայ օրէնգրքներով ձեռքբերով եւ տիրապետող կրօնա-գաւառնաբանական հասանքների ու վէճերի ազդեցութեան ներքոյ ամբողջովին ծնուել էր աստուածաբանական սկզբունքներով, ահա այդ շրջանի իրաւունքը՝ եւ իրաւաբանական-օրէնագրական արտադրութիւնները ազատ ժառանգական Հայաստանում, ուր իրենց տարածման համար պարտաւ հող էին գտնում: Հայ հոգեւորականութեան ներկայացուցիչները Բիզանդական այդ իրաւունքի բազմաթիւ օրէնագրքերից ու դատաստանագրքերից կարողանում էին քաղուածական թարգմանութիւններ ու փոխադրութիւններ անելու, այդ յարմարեցնելով տեղական հայ կեանքի պայմաններին. շատ անգամ նոյն իսկ բառացի վերածում էին հայերենի այս կամ այն յարմար-ձանաչուած օրէնագիրքը ամբողջովին: Այդ օրէնագրական ժողովածուներն ու հաւաքածուները ստուարածաւալ չէին եւ պարունակում էին այն ամենն, ինչ որ

Հայ թարգմանիչների անձնական կարծիքով կարևոր ու պիտանի էին տեղական ժողովրդական պեղքերի ու կենսական պայմանների համար:

Բիւզանդական այդ իրաւունքի վերաբերեալ օրէնքները գլխաւորապէս փոխառած են այն օրէնագրութիւններից, որոնք կազմուել էին Ղեւոն Զ. Իմաստունի, Իրենէի, Կոստանդին եւ այլ կայսրների թագաւորութեան օրերին: Միայն այս վերջին Բիւզանդական աղբիւրներից հնարաւորութիւն ունէր Մխ. Գօշը օգտուելու իր Գատաստանագրքի համար. միայն այս յետյուստինիանական բիւզանդական իրաւունքը կարողացաւ որոշ ազդեցութիւն ունենալու Մխ. Գօշի իրաւաբանական աշխարհայեցողութեան վրայ: Յիրաւի այդ ազդեցութեան շնորհիւրը գտնուի ենք Հայոց Գատաստանագրքի որոշ մասերում եւ ընդհանուր ոգու վրայ: Իրաւական սկզբունքային շատ հարցերի լուծման համար Մխ. Գօշը ստիպուած էր ղեկավարուել այդ Բիւզանդական իրաւունքի էական կէտերով: Մասնաւոր շեշտակի աչքի է զարնում այդ ազդեցութիւնը Մխիթար Գօշի իրաւաբանական Հայեցողքների վրայ գատաստանութեան եւ ընդհանրապէս գործող իրաւունքի նշանակութեան հարցի վերաբերմամբ: Այդ էական իր մտքերը մեր հեղինակը արծարծում է գլխաւորապէս Ղաթաղի օրէնքում մէջ: Այնուհետեւ իսկապէս բիւզանդական իրաւունքի ազդեցութեանը պէտքէ վերագրել, որ Մխ. Գօշը ձգնում է հարթել Հայ իրաւագիտական աշխարհայեցողում այն գաղափարները, որոնք վերաբերում են եղբոր ու զբո՞ղ ժառանգական հաւասար իրաւունքներին եւ ընդհանրապէս ժառանգական իրաւունքին, որը, ինչպէս առիթ կ'ունենանք յետոյ տեսնելու հայերի մէջ ամբողջովին հիմնուած էր ազնատական սկզբունքի վրայ: Յամենայն դեպս պէտք է շեշտել, որ քաղաքացիական իրաւունքի վերաբերմամբ բիւզանդական իրաւունքի նշանակութիւնը, որպէս Մխ. Գօշի Գատաստանագրքի աղբիւրի, լոկ ընդհանուր գծերով եւ ընդհանուր սկզբունքների իւրացնելով է ընդունում ու արտայայտում, քանի որ մեր Գատաստանագրքի մէջ չենք գտնում առանձին յօդուածներ, յատուկ օրէնքներ, որոնք, անփոփոխ կամ որոշ խմբագրութեամբ փոխադրուած, մուծուէին Մխ. Գօշի Գատաստանագրքի մէջ:

Վերլուծելով ուրեմն Հայոց Գատաստանագրքը, եզրակացնում ենք, որ գլխաւորապէս շարս անսակի աղբիւրներ որոշ չափով դեր են

խաղացել նրա ներքին բովանդակութեան վրայ: Թէ ինչ որակով կամ քանակով այդ աղբիւրներից իւրաքանչիւրը ազդել է մեր Գատաստանագրքի իրաւաբանական նիւթի վրայ, դա պարզ կը լինի, երբ յետագայ գլուխներում կը վերլուծենք Հայոց Գատաստանագրքի Գատակազմութիւնն ու Գատավարութիւնն եւ քաղաքացիական իրաւունքի ամբողջ բովանդակութիւնը:

Սակայն, ինչպէս արդէն առիթ ունեցանք շեշտելու, Մխ. Գօշը ինչ ինչ պատճառներով լուում է եւ ոչ մի բառով չի յիշատակում այն իսկական աղբիւրները, որոնք նրան խնայպէս ծառայել են Գատաստանագրքը յօրինելիս, զոր օրինակ՝ Բիւզանդական կամ սովորութեան իրաւունքները, այլ սահմանափակում է ընդհանուր, նշանակութիւնից զուրկ բառերով. կամ թէ յիշատակում է այնպիսի աղբիւրներ, զոր օրինակ՝ մահմեմական իրաւունքը, որոնցից, կարելի է ասել, քանզի չի օգտուել: Մխ. Գօշի այդ տեսակ, առաջին հայեցողք անհասկանալի լուծեան պատճառը պէտք է որոնել հետեւեալ փաստի մէջ: Հայոց Գատաստանագրքի Նախագրութիւնը Մխիթար Գօշը յօրինել է նախ քան Գատաստանագրքի յօդուածների կազմելը: Իսկ այդ յօդուածները, որպէս կարելի է նզարկանել նրանց շարագրական ձեւից, գրի էին աւտուել եւ հաւաքուել աստիճանաբար մեր հեղինակի ձեռքով մինչեւ իր մահը, ուրեմն մի երկար ու ձիգ ժամանակամիջոցում նա ժողովում էր իր ձեռքը հասած նիւթերը, ընտրութիւն անում նրանցից, քաղաւաններ հանում այս ու այն պատահած օրէնագրերից: Ուստի քննական է, որ հենց իրեն Մխ. Գօշին էլ թերեւս պարզ չէր, երբ նա գրում էր Ղաթաղի օրէնք, թէ ինչ տեսակ իրաւաբանական աղբիւրներից է ինքը գլխաւորապէս օգտուելու եւ գոյութիւն ունեցող բազմաթիւ օրէնարական ժողովածուներից ու Գատաստանագրքերից որոնք են յարմարագոյն եւ համապատասխան լինելու իր ձեռնարկած գործին: Միմիայն այդ հանգամանքը կարող էր ստիպել մեր հեղինակին իր Գատաստանագրքի Նախագրութեան մէջ այնպէս անորոշ ու մշտաշարժ արտայայտուելու իրեն ծառայած աղբիւրների վերաբերմամբ:

(Ըրբնաւորութիւն) 70. ՍՄՄՈՒՆԵՆԻԱՆ

